Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	05.05.2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Քոչարյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ն. Մանուկյան
	Ռ. Ադամյան
	Վ. Առաքելյան
	Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Քոչարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

- 27.04.2018թ. հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 27.04.2018թ. ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Քոչարյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Քոչարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Քոչարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Քոչարյան

Անդամներ՝ ---------- Ն. Մանուկյան

---------- Ռ. Ադամյան

---------- Վ. Առաքելյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան